

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի սոուզվում: Սոուզվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթուղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ինչպիսի՞ շարժման դեպքում են հավասար մարմնի անցած ճանապարհը և տեղափոխության մոդուլը:

- 1) Միայն հավասարաչափ շարժման դեպքում:
- 2) Միայն միակողմ ուղղագիծ շարժման դեպքում:
- 3) Միայն ուղղագիծ հավասարաչափ շարժման դեպքում:
- 4) Բոլոր դեպքերում:

2 Ω^* ըն է արագացման միավորը՝ ըստ ՍՀ -ի հիմնական միավորների:


- 1) 1 м/վ
- 2) 1 սմ/վ^2
- 3) 1 մ/վ^2
- 4) 1 սմ/վ

3 Մարմնը հավասարաչափ պտտվում է R շառավղով շրջանագծով: Որքա՞ն է նրա արագությունը, եթե պտտման հաճախությունը n է:

- 1) $2\pi Rn$
- 2) $\frac{2\pi n}{R}$
- 3) $\frac{2\pi R}{n}$
- 4) $\frac{R}{2\pi n}$

4 Ω^* զրաֆիկն է պատկերում հաստատուն ուժի ազդեցությամբ տեղի ունեցող շարժում:

- 1) w
- 2) p
- 3) q
- 4) η



5 F ուժի ազդեցությամբ չդեֆորմացված զսպանակը երկարեց x -ով: Որքա՞ն է զսպանակի կոշտությունը:

- 1) $\frac{F^2}{2x}$
- 2) $\frac{F}{x}$
- 3) $\frac{F}{2x}$
- 4) $\frac{Fx}{2}$


6

Տարբեր զանգվածներով երեք մարմիններ ($m_1 > m_2 > m_3$) ընկնում են Երկրի վրա: Դրանցից ո՞րն է շարժվում ամենամեծ արագացումով: Օդի դիմադրությունը հաշվի չառնել:

- 1) m_1 զանգվածով մարմինը
- 2) m_2 զանգվածով մարմինը
- 3) m_3 զանգվածով մարմինը
- 4) Բոլոր մարմինները շարժվում են նույն արագացումով

7


Նկարում պատկերված են հորիզոնական հարթության վրա գտնվող մարմնի վրա ազդող ուժերը: Որքա՞ն է շփման ուժը, եթե մարմինը դադարի վիճակում է:



- 1) $F_2 = 0$
- 2) $F_2 = \mu mg$
- 3) $F_2 = F$
- 4) $F_2 = \mu N$

8

Ի՞նչ զանգվածով բեռ պետք է կախել ձողի C կետից, որպեսզի այն լինի հավասարակշռության վիճակում:



- 1) 0,1 կգ
- 2) 0,2 կգ
- 3) 0,4 կգ
- 4) 0,8 կգ


9

Տղան k կոշտությամբ չդեֆորմացված զսպանակը ձգեց x չափով: Ի՞նչ աշխատանք կատարեց տղան:

- 1) kx
- 2) $\frac{kx}{2}$
- 3) $\frac{kx^2}{2}$
- 4) 0

10

Սահնակը դադարի վիճակից սահում է բլրի զագաթից և կանգ առնում բլրի ստորոտում: Որքա՞ն է շփման ուժի կատարած աշխատանքը:



- 1) mgH
- 2) $-mgH$
- 3) $mg(H + S)$
- 4) $-mg(H + S)$

11

Զրով լցված բաժակում լրղացող սառույցը հալվեց: Ինչպես և փոխվեց ջրի մակարդակը բաժակում:

- 1) բարձացավ
- 2) իջավ
- 3) մնաց նույնը
- 4) պատասխանը պայմանավորված է սառցի զանգվածով

12

Ո՞ր բանաձևով է որոշվում k կոշտությամբ զսպանակին ամրացված m զանգվածով բեռի ներդաշնակ տատանումների հաճախությունը:

- 1) $\sqrt{\frac{k}{m}}$
- 2) $\frac{1}{2\pi} \sqrt{\frac{k}{m}}$
- 3) $2\pi \sqrt{\frac{m}{k}}$
- 4) $2\pi \sqrt{\frac{k}{m}}$

13

Որտե՞ղ ավելի շատ մոլեկուլ կա՝ մեկ մոլ ջրածնո՞ւմ, թե՞ մեկ մոլ ջրում:

- 1) մեկ մոլ ջրածնում
- 2) մեկ մոլ ջրում
- 3) մոլեկուլների թվերը հավասար են
- 4) պատասխանը կախված է ջրի ազրեգատային վիճակից

14

Ո՞րն է Գեյ-Լյուսակի օրենքն արտահայտող հավասարումը:

- 1) $\frac{P_1}{P_2} = \frac{V_1}{V_2}$
- 2) $\frac{V_1}{V_2} = \frac{T_1}{T_2}$
- 3) $\frac{P_1}{P_2} = \frac{T_1}{T_2}$
- 4) $\frac{V_1}{V_2} = \frac{P_2}{P_1}$

15

Ինչպես կփոխվի իդեալական գազի ճնշումը, եթե յուրաքանչյուր մոլեկուլի միջին արագությունը մեծանա 2 անգամ, իսկ կռնցենտրացիան մնա նույնը:

- 1) կմեծանա 2 անգամ
- 2) կմեծանա 4 անգամ
- 3) կփոքրանա 2 անգամ
- 4) կփոքրանա 4 անգամ

16

Ո՞ր բանաձևով է որոշվում m զանգվածով մարմնի c տեսակարար ջերմունակությունը, եթե Q ջերմաքանակ հաղորդելիս նրա ջերմաստիճանը t_1 -ից աճում է մինչև t_2 :

Ազրեգատային վիճակի փոփոխություն տեղի չի ունենում:

$$1) \quad c = \frac{Q}{m(t_2 + t_1)}$$

$$2) \quad c = \frac{Q}{m(t_1 - t_2)}$$

$$3) \quad c = \frac{Q}{m(t_2 - t_1)}$$

$$4) \quad c = \frac{2Q}{m(t_1 + t_2)}$$

17

Ինչի՞ համար է ծախսվում իզոխոր պրոցեսի ընթացքում գազին հաղորդված ջերմաքանակը:

- 1) միայն աշխատանք կատարելու համար
- 2) միայն զազի ներքին էներգիան մեծացնելու համար
- 3) ներքին էներգիան մեծացնելու և աշխատանք կատարելու համար
- 4) զազի ծավալը մեծացնելու համար

18

Ո՞ր ջերմաստիճանում է գոլորշիանում ջուրը:

- 1) միայն 18°C -ից բարձր ջերմաստիճանում
- 2) միայն 100°C ջերմաստիճանում
- 3) միայն 100°C -ից բարձր ջերմաստիճանում
- 4) կամայական ջերմաստիճանում

19

Ի՞նչ բանաձևով է որոշվում r շառավիղով մազական խողովակում ρ խտությամբ հեղուկի սյան բարձրությունը:

$$1) \quad h = \frac{2\sigma}{\rho gr}$$

$$2) \quad h = \frac{\sigma}{\rho gr}$$

$$3) \quad h = \frac{2\sigma}{r}$$

$$4) \quad h = \frac{\sigma}{r}$$

20

Սարմնում էլեկտրոնների թիվը N_e է, պրոտոններինը՝ N_p , իսկ նեյտրոններինը՝ N_n : Ո՞րն է ճիշտ պնդումը, եթե մարմինը լիցքավորված է դրականապես:

$$1) \quad N_e > N_p$$

$$2) \quad N_e = N_p$$

$$3) \quad N_e < N_p$$

$$4) \quad N_e > N_n$$

21

Երկու անշարժ կետային լիցքերի էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժի մոդուլն F է: Որքա՞ն կլինի այն, եթե լիցքերից յուրաքանչյուրի մոդուլը փոքրացնենք n անգամ:

$$1) \quad \frac{F}{n^2}$$


$$2) \quad nF$$

$$3) \quad \frac{F}{n}$$

$$4) \quad n^2 F$$

22

Բացասական լիցքավորված մասնիկը տեղադրեցին համասեռ էլեկտրաստատիկ դաշտում: Ի՞նչ ուղղություն և բնույթ ունի մասնիկի շարժումը: Շփման և ծանրության ուժերն անտեսել:



- 1) ձախ, ուղղագիծ հավասարաչափ
- 2) աջ, ուղղագիծ հավասարաչափ
- 3) ձախ, ուղղագիծ հավասարաչափ արագացող
- 4) աջ, ուղղագիծ հավասարաչափ արագացող


23

Լիցքավորված և աղբյուրից անջատված օդային կոնդենսատորը խորասուզում են կերռ-սխնի մեջ: Ինչպես է փոխվում կոնդենսատորի շրջադիրների միջև լարումը:

- 1) չի փոխվում
- 2) մեծանում է
- 3) փոքրանում է
- 4) հավասարվում է զրոյի

24

Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ծայրերին կիրառված լարումը, եթե R դիմադրությունով անցնում է I_0 հոսանք:




- 1) $3I_0R$
- 2) $\frac{I_0R}{3}$
- 3) I_0R
- 4) $\frac{2I_0R}{3}$

25

Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1) $4 R$
- 2) R
- 3) $3 R/2$
- 4) $4 R/3$



26

Ինչպես կփոխվի միավոր ժամանակում հաղորդչում անջատված ջերմաքանակը, եթե, անվտանգ պահելով լարումը, նրա դիմադրությունը մեծացնենք 3 անգամ:

- 1) կմեծանա 3 անգամ
- 2) կմեծանա 9 անգամ
- 3) կփոքրանա 3 անգամ
- 4) կփոքրանա 9 անգամ

27

Ինչպես է փոխվում կիսահաղորդչի հաղորդականությունը այն լրւսավորելիս:

- 1) մեծանում է
- 2) մնում է նույնը
- 3) փոքրանում է
- 4) կարող է մեծանալ կամ կփոքրանալ


28

Ինչպես է փոխվում էլեկտրոլիտի հաղորդականությունը ջերմաստիճանը բարձրացնելիս:

- 1) մեծանում է
- 2) չի փոխվում
- 3) փոքրանում է
- 4) կմեծանա կամ կփոքրանա

29


Ինչպես և դեպի \vec{B} կողմ կշարժվի էլեկտրոնը դադարի վիճակից, եթե այն տեղադրված է ժամանակի ընթացքում չփոփոխվող համասեռ մագնիսական դաշտում:



- 1) հավասարաչափ արագացումով, ազ
- 2) շրջանագծով, ժամալաքի ուղղությամբ
- 3) շրջանագծով, ժամալաքի հակառակ ուղղությամբ
- 4) կմնա անշարժ

30

Մի դեպքում հաստատուն մագնիսը մետաղե օղակի մեջ մտցնում են հյուսիսային քենուվ, մյուս դեպքում՝ հարավային քենուվ: Ո՞ր դեպքում օղակում կմակածվի հոսանք:



- 1) ա դեպքում
- 2) բ դեպքում
- 3) ոչ մի դեպքում
- 4) երկու դեպքում ել


31

Որքա՞ն է ձառագայթի անկման անկյունը, եթե անդրադարձող ձառագայթն ընկնող ձառագայթի հետ կազմում է ուղիղ անկյուն:

- 1) 45°
- 2) 90°
- 3) 135°
- 4) 180°

32


Նկարում պատկերված են ընկնող և բեկված ձառագայթները Ա միջավայրից Բ միջավայրն անցնելիս: Ո՞րն է այդ միջավայրերի n_A և n_B բեկման ցուցիչների միշտ հարաբերակցությունը:



- 1) $n_A > n_B$
- 2) $n_A < n_B$
- 3) $n_A = n_B$
- 4) հարաբերակցությունը կախված է անկման անկյունից

33

Լույսի երկու զուգահեռ ձառագայթ ջրից դուրս են գալիս օդ:
ա ձառագայթը ամսիջապես է դուրս գալիս օդ, իսկ բ ձառագայթը՝ ջրի մեջ ապակե հարթ-զուգահեռ թիթեղի միջոցով անցնելուց հետո: Ի՞նչ ընթացք կունենան օդում աև բ ձառագայթները:



- 1) կմնան իրար զուգահեռ
- 2) կտարամիտեն
- 3) կզուգամիտեն
- 4) կախված է թիթեղի նյութի բեկման ցուցչից

34

Հավաքող ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի նրա պատկերը լինի իրական:

- 1) կիզակետային հեռավորությունից մեծ հեռավորությամբ
- 2) կիզակետային հեռավորությունից փոքր հեռավորությամբ
- 3) կամայական հեռավորությունում պատկերը կլինի իրական
- 4) կամայական հեռավորությունում պատկերը կլինի կեղծ

35

λ երկարությամբ լուսային ալիքը ընկնում է $d = 5\lambda$ պարբերությամբ դիֆրակտային ցանցի վրա: Ի՞նչ անկյան տակ կդիտվի երկրորդ կարգի մաքսիմումը:

- 1) $\arcsin 0,2$
- 2) $\arcsin 0,15$
- 3) $\arcsin 0,3$
- 4) $\arcsin 0,4$

36

Արեգակն անընդհատ էներգիա է ձառագայթում: Փոխվո՞ւմ է արդյոք նրա զանգվածն այդ ընթացքում:

- 1) մեծանում է
- 2) չի փոխվում
- 3) փոքրանում է
- 4) հնարավոր է մեծանա կամ փոքրանա

37

Եթե կեկտրամագնիսական ալիքի հաճախությունը փոքրանա երկու անգամ, ապա ինչպե՞ս կփոխվի ճառագայթման ֆուսոնի էներգիան:

- 1) կմեծանա 2 անգամ
- 2) կմեծանա 4 անգամ
- 3) կփոքրանա 2 անգամ
- 4) կփոքրանա 4 անգամ

38

Ինչի՞ց է կախված լույսի ազդեցությամբ մետաղից պոկված կեկտրոնի կինետիկ էներգիան:

- 1) միայն լույսի ուժգնությունից
- 2) միայն լույսի հաճախությունից
- 3) միայն մետաղի ելքի աշխատանքից
- 4) մետաղի ելքի աշխատանքից և լույսի հաճախությունից

39

Տարբեր հաճախությամբ քանի՞ ֆուսոն կարող է առաքել 4-րդ ստացիոնար էներգիական մակարդակում գտնվող ատոմը, եթե բոլոր անցումները հնարավոր են:

E₄ _____
E₃ _____
E₂ _____

- 1) 3
- 2) 4
- 3) 5
- 4) 6

E₁ _____

40

Ո՞րն է $^{27}_{13}\text{Al} + ^4_2\text{He} \rightarrow ^{30}_{15}\text{P} + X$ միջուկային ռեակցիայի երկրորդ X անդամը:

- 1) α -մասնիկ
- 2) էլեկտրոն
- 3) նեյտրոն
- 4) γ -քվանտ

41

3 կգ զանգվածով չորսուն հորիզոնական հարթության վրա շարժվում է հավասարաչափ, երբ նրա վրա հորիզոնական ուղղությամբ ազդում է 6 Ն ուժ: Որքա՞ն է չորսուի և հարթության միջև շփման գործակիցը: Ազատ անկման արագացումը 10 m/s^2 է: Պատասխանը բազմապատկել 10 -ով:

42

Զերմային շարժիչը ջեռուցչից յուրաքանչյուր վայրկյանում ստանում է 8000Ω զերմաքանակ և սառնարանին է տալիս 6400Ω : Որքա՞ն է շարժիչի O_{FF}-ն՝ տոկոսներով:

43

Որքա՞ն է կոնդենսատորի լիցքը, եթե նրա շրջադիրների միջև լարումը 200 V է, իսկ նրա մեջ կուտակված էլեկտրական էներգիան՝ 4 J : Պատասխանը բազմապատկել 10^2 -ով:

44

Որքա՞ն է 900 նմ ալիքի երկարությամբ լուսի ֆուսոնի էներգիան: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ ՋՎ է, լուսի արագությունը վակուումում՝ $3 \cdot 10^8$ մ/վ: Պատասխանը բազմապատկել 10^{20} -ով:

45

(45-46) Տրված է 3 գ զանգվածով գնդիկի տատանումների հավասարումը՝ $x = 0,4 \sin(100t + 0,6)$,

որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:

46

Որքա՞ն է գնդիկի վրա ազդող առավելագույն ուժը:

(47-48) 2 կգ ջուրը 1500 Վտ հզրությամբ թեյնիկով անհրաժեշտ է տաքացնել 20°C -ից մինչև 80°C շերմաստիճանը: Զրի տեսակարար ջերմունակությունը $4200 \Omega/\text{կգ}\cdot\text{Կ}$ է: Համարել, որ անջատված ողջ շերմաքանակը ծախսվում է զրի տաքացման համար:

47 Որքա՞ն շերմաքանակ է անհրաժեշտ ջուրը տաքացնելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-3} -ով:

48 Որքա՞ն ժամանակ կպահանջվի զրի տաքացման համար:

(49-50) $4 \cdot 10^3$ Օմ դիմադրությամբ հարթ շրջանակը տեղադրված է մազնիսական դաշտում:
Շրջանակ թափանցող մազնիսական հոսքը 10^{-2} վ-ի ընթացքում հավասարաչափ նվազում է 4 Վբ-ով:

49 Որքա՞ն է շրջանակում մակաձված ԷլՇՈՒ-ն:

50

Որքա՞ն է շրջանակով անցնող հոսանքի մեծությունը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

51

(51-52) Լույսի ճառագայթը վակուումից անցնում է թափանցիկ դիէլեկտրիկի մեջ: Ճառագայթի անկման անկյունը 45° է: Դիէլեկտրիկի բեկման ցուցիչը $\sqrt{2}$ է:

51

Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունն՝ արտահայտված աստիճաններով:

52

Որքա՞ն է բեկման հետևանքով սկզբնական ուղղությունից ճառագայթի շեղման անկյունն՝ արտահայտված աստիճաններով:

- (53-54) Տվյալ մետաղի համար ֆոտոէֆեկտի կարմիր սահմանը $6 \cdot 10^{14}$ Հց է: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ ՋՎ է, էլեկտրոնի լիցքի մոդուլը՝ $1,6 \cdot 10^{-19}$ Կլ:

53

Որքա՞ն է ֆոտոէկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան, եթե նրանց լրիվ արգելակման լարումը 3,3 Վ է: Պատասխանը բազմապատկեր 10²¹- ով:


54

Որքա՞ն է մետաղի վրա ընկնող լույսի հաճախությունը, եթե ֆոտոէկտրոնների լրիվ արգելակման լարումը 3,3 Վ է: Պատասխանը բազմապատկեր 10⁻¹⁴-ով:

55

- (55-57) 4 կգ զանգվածով մարմինն սկսում է սահել $H = 4$ մ բարձրությամբ թեք հարթությունից, որը սահուն կերպով վերածվում է $R = 2$ մ շատավղով գլանային մակերևույթի: Ազատ անկման արագացումը 10 m/s^2 է:

Որքա՞ն է ծանրության ուժի կատարած աշխատանքը, մարմինը H բարձրությունից մինչև գլանային մակերևույթի ամենաբարձր Յ կետը սահելու ընթացքում:



56 Որքա՞ն է մարմնի կինետիկ էներգիան Յ կետում, եթե մարմնի վրա ազդող շփման ուժի աշխատանքը մինչև Յ կետը սահելու ընթացքում 40 Ω է:

57 Որքա՞ն է գլանային մակերևույթի Յ կետում մարմնի գործադրած ձնշման ուժը:

(58-60) Էկրանին ստացվում է հավաքող բարակ ոսպնյակից որոշ հեռավորությամբ տեղադրված առարկայի 2 անգամ խոշորացված պատկերը: Այնուհետև առարկան մոտեցնում են ոսպնյակին 0,1 մ-ով և, շարժելով էկրանը, նորից ստանում են առարկայի հստակ պատկերը՝ այս դեպքում 4 անգամ խոշորացված:

58 Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից առաջին դեպքում: Պատասխանը բազմապատկեք 10- ով:

59

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

60

Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ոսպնյակից երկրորդ դեպքում:

(61-64) Երկու ծայրերը գողված հորիզոնական խողովակը 0,05 կգ զանգվածով բարակ միոցով բաժանված է երկու հավասար մասերի, որոնցից յուրաքանչյուրում գտնվում է զազ 10^5 Պա ձնշման տակ: Խողովակի երկարությունը 1 մ է, լայնական հատույթի մակերեսը՝ 10^{-4} մ²: Խողովակը առանցքի երկայնքով հաստատուն արագացմամբ շարժում են ձախից աջ, որի հետևանքով միոցը տեղաշարժվում է 0,3 մ-ով: Զերմաստիճանը համարել հաստատուն: Խողովակի և միոցի շփումն անտեսել:

61

Որքա՞ն է զազի ձնշումը խողովակի ձախ մասում, խողովակը շարժելու ընթացքում: Պատասխանը բազմապատկել 10⁻⁴-ով:


62 Որքա՞ն է գազի ճնշումը խողովակի աջ մասում, խողովակը շարժելու ընթացքում:
Պատասխանը բազմապատկել 10^{-2} -ով:

63 Որքա՞ն է խողովակի շարժման արագացումը:

64 Որքա՞ն կտեղաշարժվի միսցը, եթե խողովակը շարժենք առանցքի երկայնքով 200 m/s^2 արագացմամբ: Ընդունել $\sqrt{2} = 1,4$: Պատասխանը բազմապատկել 10^{-3} -ով:

- (65-68) Նկարում պատկերված շղթայում A և B սեղմակները 150 Ω լարման ցանցին միացնելիս 1 և 2 կետերի միջև լարումը 40 Ω է, իսկ R_2 դիմադրությունը անցնալ հաստատուն հոսանքի ուժը՝ 2 A: Շղթայում C ունակությունը 4 պֆ է:

65 Οրքա՞ն է R_3 դիմադրությունը:



66 Οրքա՞ն է R_2 դիմադրությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

67 Οրքա՞ն է կոնդենսատորի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^{11} -ով:


68

Որքա՞ն է կոնդենսատորի էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{11} -ով:

69

Թելից կախված m զանգվածով գնդիկը α անկյունով շեղում են հավասարակշռության դիրքից և բաց թողնում: Հաստատե՛ք կամ ժիւտե՛ք հետևյալ պնդումները:

- 1) Առավելագույն շեղման A կետում թելի լարման ուժը $mg \sin \alpha$ է:
- 2) Առավելագույն շեղման դիրքում գնդիկի կենտրոնաձիգ արագացումը զրո է:
- 3) Առավելագույն շեղման դիրքում գնդիկի արագացումն ուղղված է այդ կետում հետագծի շոշափողի երկայնքով:
- 4) Հավասարակշռության B կետով անցնելիս թելի լարման ուժը փոքր է ծանրության ուժից:
- 5) Հավասարակշռության B կետում մարմնի արագացումն ուղղված է դեպի թելի կախման կետը:
- 6) Գնդիկի շարժման ընթացքում շեղման α անկյունը փոքրանալիս թելի լարման ուժն աճում է:



Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:

- 1) Տատանողական կոնտուրում կոնդենսատորի լիցքաթափման սկզբից $t = \frac{T}{4}$ ժամանակ անց կոնտուրի լրիվ էներգիան կենտրոնացված կլինի կոճում:
- 2) Տատանողական կոնտուրում ազատ էլեկտրամագնիսական տատանումների ընթացքում մագնիսական դաշտի էներգիան փոխվում է ν հաճախությամբ: Դա նշանակում է, որ տատանողական կոնտուրում լիցքի տատանումների հաճախությունը 2ν է:
- 3) Լիցքավորված մասնիկի ցանկացած շարժման ընթացքում այն ճառագայթում է էլեկտրամագնիսական ալիք:
- 4) Էլեկտրամագնիսական ալիքում Շ -ն ուղղահայաց է ալիքի տարածման ուղղությանը, իսկ Ց -ն ունի տարածման ուղղությունը:
- 5) Վակուումում էլեկտրամագնիսական ալիքի տարածման արագությունը կախված է հաճախությունից:
- 6) Վակուումից որևէ միջավայր անցնելիս էլեկտրամագնիսական ալիքի երկարությունը փոխվում է: